

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10757

185

ՅԵ. ԳԱՆՑԻԳ

ՊԻՈՆԵՐՆԵՐԸ  
ՅԵԿ  
ԳԵՂՁԿՈՒՅԻՆ

ԳՐԱԴԱՐԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒԹ  
ВОСТОКОВЕДЕНИЯ  
Академии Наук  
СССР

ՀՐԱՄԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ «ԶՈՒԿՎԻԳՈ»

ՀԿՅՈՒ  
7-18

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԲԱՑՈՒՐ ԽԸ

№183  
Հա 1334

ՅԿՅՈՒ  
7-18

Հայաստան  
24 SEP 2006  
1 DEC 2009

Պրոլետարիատի բարեկարգության միացել:

Հ. Ե. Ա. Ա. Յ. Ե. ԹԱՅՎՈՐՈՒԴՈՒ-ԳԵՎՃԱԿՈՒՇՈՒ ԲՈՅԱՆ.

ՅԵ. ԳԱՆՑԻԿ

ԻՆՍԻՏՈՒ  
ԻՆՍԻՏՈՒ  
Առաջնահամար  
Ակադեմիա Խոհեմարդության  
ԽՍՀՄ

ՊԻՈՆԵՐՆԵՐԸ  
ՅԵՎ  
ԳԵՂՁԿՈՒՅԻՆ

Հայաստանական «ԶՈՒԿԱԿԱՆ»  
ԹԻՖԼԻՍ  
1926

ԳԳ-ԳԱՅԵ

## ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ.

Մեր աշխատավորուհիները, պատգամավորուհիները  
շատ քիչ գաղափար ունեն պիոներական շարժման մասին:

Իսկ պատղամավորուհիները և գեղջկուհիներն ամենուրիա աշխատանքների ժամանակ գործ են ունենում պիուներների և պիոներական կազմակերպության հետ:

«Պիոներները և գեղջկուհին» գրքույկը շատ հասկանալի և պարզ լեզվով ծանոթացնում ե ընթերցողներին մասնական շարժման հետ, թե ինչպես են կազմակերպված պիոներական կոլեկտիվները, ինչ աջակցություն պետք է ցույց տա գեղջկուհին պիոներին գյուղում, հետո՝ թե ինչպես պիոները գյուղում նոր կենցաղ ե մտցնում:

Թարգմանության ժամանակ կատարված ե աննշան կրծատումներ և ավելացրված ե հետևյալ գլուխը—«մանկական շարժումը նոր կենցաղ ե մտցնում ընտանիքում» Սորոկինի «Բոլոր յերեխաները դեպի պիռներական շարքերը» գրքույկից։ Կարծում ենք վոր գրքի հեղինակը ներողամիտ կըլինի սրա համար։

ს. ს. გ. ს. პოლიგრაფტექსტის 1-ლი სტამბა. პლეხან. პროს. № 91.

5/XI-26. 893. № 183 ~~1543~~ № 1543 ლაიბერტი 2500.



21 MAR 2013

## ԻՆՉ ԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՐ ՄԻՆՉ ՀՈԿՏԵՄԲԵՐԸ.

Մեզանից ամեն մեկը գիտե, թե մինչ հեղափոխությունը, ինչպես դժվար եր աշխատավոր կնոջ համար մեծացնել և սովորեցնել իր յերեխային։ Դժվար եր հատկապես գեղջկունու համար իր յերեխաներին դաստիարակել։ Նա ժամանակ չուներ յերեխաներին խնամելու։ Որնիբուն աշխատելով՝ գեղջկունին չեր ուղղում անգամ իր կորացած մեջքը, քաշ եր գալիս իր կամ կալվածատիրական տնտեսության մեջ. իսկ մանկիկներին, սովորաբար թողնում եր գառամյալ տատի կամ մեծ քրոջ խնամքին. պարզ է, վոր վերջնական ել պատահականության եյին յենթարկում յերեխաների դաստիարակությունը։ Այսպիսով գեղջկունու մանկիկները թողնվելով բախտի խնամքին՝ ստանում եյին զյուղական փողոցի դաստիարակություն։

Ցարական կառավարությունը հոգ չեր տանում զյուղական յերեխաների դաստիարակության համար։ Այլ ընդհակառակը, նա աշխատում եր, վորքան կարելի յե զյուղացիներին պահել իսպարի և տղիտության մեջ։ Բավական և հիշել թե ով և ինքը թագավորը, թե ովքեր եյին ցարական նախարարներն ու աստիճանավորները (չինովնիկները)։ Ամենից առաջ նրանք կալվածատերեր են յեզեւ. Ինքը թագավորը, վողջ յերկրի ամենամեծ և ամենից հարուստ կալվածատերն եր. ինչպես ինքն եր, անյալիս ել բոլոր նրա արքանյակները հարուստ-կալվածատերեր եյին։ Նրանցից յուրաքանչյուրը ուներ ագարտիամասեր, կալվածքներ և մի քանի հազար գեսայտին անտառներ ու հողեր։ Յեկ վորպեսզի այդ հողերը մշակվի և այն ել այնպես մշակվի, վոր հարավոր լինի մեծ ոգուտ ստանալ այդ հողերից՝ նրանց հարկավոր եյին անվարձ մշակներ։ Իսկ մեր զյուղացությունը յերկար տարիներ շարունակ հանդիսացել ե նրանց անփարձ մշակը, ստրուկը, վորից քամել են նրա վերջին կաթիլ արյունը։

Մեր զյուղացությունը ստրուկ ե յեղել վոչ միայն ձորտամիբության շրջանում, այլ և նրանից հետո ևս. իսկ վորպեզի զյու-

զացիները մշտկեն և ցանեն հողը, հարկադրված են կալվածատիբոջից վիրցնել սերմերն ու մեքենաները վորի համար զյուղացին հարկադրված եր աշխատանքով հասուցել կալվածատիբոջ պարտքը. բայց ելի չեր կարողանում ազատվել կալվածատիբոջ ճանկերից: Այսպիսով զյուղացին դարձավ կալվածատիբոջ հավիտենական ճորտը:

Բայց կալվածատերերը գրանով չեյին բավականանում: Երանք ցանկանում եյին իրենց յերեխաներին ու թոռներին ևս ապահովել անվարձ աշխատանքով: Իսկ ինչ միջոցներով պետք եր համել այդ նպատակին: Այսաեղ ել կալվածատիբոջն ոգնության և գալիս յեկեղեցին: Յեկեղեցին գեղջկուհուն սովորեցնում եր իր յերեխաներին դաստիարակել աստծո վախի ներքո, սիրել թագավորին, տիրեջը և սեփականատերերին ու հազարնդվել մեծերին: Վախով մեծացած, ընկնիքած ու հարստահարված գեղջկուհին՝ յերեխաներին ել սովորեցնում եր ապրել և աշխատել այնպես, ինչպես ինքն և ապրել: «Թող վոր մեր յերեխաներն ապրեն այնպես, ինչպես ապրել են մեր պապերն ու մեծ պապերը» ասում եր գեղջկուհին:

Նա չեր գիտակցում և չեր մտածում այն մասին՝ արդիոք լավ կյանք են վարել իր պապերն ու պապի պապերը: Այսպիսով սերմդից սերունդ անցնելով, գեղջկուհին դառնում եր իրավագուրկ ստրկուհի և իր յերեխաներին ել դաստիարակում եր նույն ստրկական վորով:

## ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ.

Վրա հասավ Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը: Բանվորներն ու զյուղացիները դեն շպրտեցին թագավորին: Կոմունիստական կուսակցության և ընկ. Անինի ղեկավարությամբ, բանվոր դաստիարակը հաղթեց բուրժուազիացին և սկսեց կառուցել իր բարփորա-զյուղացիական մեծամասնությունը: Այժմս գեղջկուհին համահասար իրավունքները և ստացել է առաջնային պատուի և առաջնային պատուի համար նոր կյանք և սկսվել:

Հոկտեմբերյան հեղափոխությունը բացել և գեղջկուհու աշքերն, իսկ կոմունիստական կուսակցությունը նրան սովորեցրել և պայմանական:

Մենք հաղթեցինք, բայց այդ գեռ բոլորը չեն: Մեր առաջ զեռ շատ ու շատ աշխատանք կա կանոնած: Իսկ ամենից առաջ մեզ պետք է, յերեխաներին դաստիարակել նոր վոգով: Կոմունիստական կուսակցությունն այս գործում ոգնության և գալիս գեղջկուհուն: Կոմյերիտմիության հետ կուսակցությունը կազմակերպում եր բանվորների և զյուղացիների յերեխաների համար պիտի կանաչը կոլլեկտիվիտերը: Բուրժուատիան բոլոր յերկրներում, ինչպես և Ռուսաստանի Յարական իշխանության որոք, կապիտալիստները, աստիճանավորների և քաղքենիների յերեխաներից պարտաստում եյին բուրժուազիայի համար հավատարիմ ու հրու ծառաներ: Դպրոցներում և զորանոցներում, բուրժուազիան ամեն կերպ աշխատում եր բանվորների և զյուղացիների յերեխաների մեջ խեղդել պրոլետարական ընապետ. Նրանցից պատրաստել բանվոր դասակարգի զավաճաններ, հակա-հեղափոխականներ և սպիտակ գվարդիականներ: Իսկ ցարի ժամանակ մվեր եյին ինեղդում ամեն մի հեղաշրջում, կրակում ու բանտերը նստացնում բանվորներին և զյուղացիներին: Ինարկե ցարական զինվորները, այսինքն, նույն զյուղացիներն ու բանվորները: Կոմունիստական կուսակցությունը բանվորների և զյուղացիների յերեխաներին համախմբելով պիտի բանական կոլլեկտիվներում, ուզում և նրանցից դաստիարակի վիտակից ու նավատրիմ մարտիկներ բանվոր դաստիարակի համար, հարստահարողների ընթափներ, կոմունիստների եւ կոմյերեխաների ոգնականներ եւ կոմունիզմի ապագա Ժիարաբներ:

Կոմունիստական կուսակցությունը պաշտպանում և յերեխաներին, վորպեսզի գործարանատերերը, կալվածատերերը և կուլտակները չընորացնեն նրանց և ուժից վեր աշխատանք կատարել չտան: Կոմյերիտմիությունը, վոր իր մեջ ընդդրկում և բանվոր և զյուղացի յերեխանարդությանը՝ ոգնում է կուսակցությանը յերեխաների դաստիարակման գործում: Այժմ՝ պիտի բաների մեջ տարվելիք վողջ աշխատանքը ընկած և կոմյերիտմիության ուսերի վրա:

Ցուրաքանչյուր գիտակից գեղջկուհի, առավել ևս գեղջկուհի պատգամավոր, պետք և իր յերեխաներին ուղարկի պիտի բանական կոլլեկտիվները:

Պիտի բաներ—կոմյերիտմիության փոխարինողներն են: Պիտի բանական կոլլեկտիվներից գուրս կգան այնպիսի անձնավորություններ, վորոնք դառնալու յեն նոր և լուսավոր կյանքի շինարարներ: Պիտի բանական կոլլեկտիվները սովորում են ապրել ու աշխատել միասնի կոլլեկտիվ աշխատանքով:

Ինչ խոսք, այդ կերպ աշխատելը հատկապես մեր զյուղի համար—շատ կարեոր է: Հին զյուղը սովորել էր ապրել միայնակ: Անցյալում գյուղական յուրաքանչյուր ընտանիք ապրում եր իր գիտցածի պես, աշխատում եր միայն իր համար իսկ ուրիշների մասին չեր հոգում:

Գյուղական յերեխաները փոքրությունից սկսած՝ սովորել են մտածել միմիայն իրենց մասին: Իսկ պիոներական կոլեկտիվներում նրանք սովորում են խելոք կերպով աշխատել ընդհանուրի ոգտին:

Առանձնապես կարեոր նշանակություն ունի կոլեկտիվներում աղջիկների մասնակցությունը: Ամենքը գիտեն, վոր անցյալում կնոջ կյանքը լիքն է յեղել դառնությամբ: Գեղջկուհին վոչ միայն կալվածատիրոջ սահմուկուհին եր, այլ և նա սարուկուհի յեր յուր հոր կամ ամուսնու ընտանիքում: Առասարակ նրան վոչ մի բանի մասին չեյին հարցնում: Չեյին լսում նրա խոսքը: Աղջկա փոխարեն, նրա բախտը վորոշում եյին ուրիշները: Այդ իսկ պատճառով, այժմ հաճախ գեղջկուհին չի կարող ոգտագործել այն բոլոր իրավունքները, վոր տվել է նրան Հոկտեմբերյան հեղափոխությունը: Գեղջկուհին փոքր ժամանակից լսել ու ինքն ել հավատացած եր, վոր «կին-արմատը մարդ չե»: Գեղջկուհին գիտեր, վոր կինարմատը չպետք է խառնվի տղամարդու գործերի մեջ՝ «քանի վոր կնոջ մազերն յերկար են—խելքը կարճ»: Անշուշտ չափազանց գժվար է նրաժամապես այդ բոլոր սովորություններից: Նա դեռ չունի այնքան համարձակություն, վորպեսզի ինքը գործի կաջի: Գեղջկուհու համար սովորություն եր դարձել ամբողջ ժամանակ ապրել մարդու և շարժվել հոր խելքով: Դժվար է ծերության հասակում նորից սովորեցնել ինքնուրույնություն: Մարզուն հարկավոր է մանկությունից սովորեցնել ինքնուրույն կյանքի: Մանկությունից աղջկա մեջ պետք է ներշնչել այն միտքը, վոր ինքը փոչնչով վատ և պակաս չե տղայից, և վոր նա նույզես կարող է յուրաքանչյուր աշխատանքի ձեռք զարկել:

Հաճախ մենք ասում ենք, վոր կնոջը նույնպես պիտի սովորեցնել, քաշել նրան հասարակական կյանքում և յերկրի կառավարման գործում: Բայց այդ ինչպես անել: Այստեղ ևս գեղջկուհուն ոգնության են գալիս պիոներական կոլեկտիվները: Պիոներական կոլեկտիվներում վոչ մի զանազանություն տղաների և աղջիկների մեջ չկա: Պիոներների մոտ վոչ մի աշխատանք չի բաժանվում թե աշխատանիքի այս մասը տղաներու գարձն և իսկ միուրա

կնոջ: Բոլորն ել մեր հասարակության համար հավասարապես պետքական աշխատավորներ են: Պիոներական կոլեկտիվներում աղջիկներին մանկությունից սովորեցնում են ապրել հասարակական կյանքով:

Մեզանում դեռ քիչ կանայք կան կոմունիստական կուսակցության և կոմյերիտամիության մեջ: Միության մասշտաբով, թվական տվյալները ցույց են տալիս, վոր յուրաքանչյուր 100 կոմունիստներին ընկնում է—10 կոմունիստականեր, իսկ յուրաքանչյուր 100—կոմյերիտականներին ընկնում է—15 կոմյերիտունիներ: Հիմա պիոներական կոլեկտիվներում մենք ունենք 42—աղջիկներ—100—պիոներներից: բայց ինչ խոսք, այդ ել քիչ ե: Հայաստանում թվական տվյալները հետեւյան են ասում, վոր յուրաքանչյուր 100—կոմունիստներից—«7» կոմունիստականեր են, իսկ 100—կոմունիլիստներից—նույնպես «7—8» յեն կոմունիլիստները: Նույն դրությունն է, աննշան տարբերությամբ, պիոներ աղջիկների թիվը կոլեկտիվներում: Այդ թվական տվյալների վրա կանգ առնել չի կարելի: Աղջիկների քանակը քաղաքի պիոներական կոլեկտիվներում ավելի մեծ է իսկ գյուղում պիոներ աղջիկները քիչ են: Անշուշտ, անհրաժեշտ է նրանց թիվը մեծացնել:

## ՄԵՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՊԻՌՆԵՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

Գյուղում պիոներներն աշխատում են աննկատելի ու դանդաղ, բայց նրանց աշխատանքը կարեոր է: Այդ ընդգծում են մեր բոլոր ղեկավարները: «Պատասի պիոներները զյուղում—ասում ե ընկ. Կալինինը, հանդիսանում են նոր կենցաղի և նոր հասարակականություն մտցնողները: Մանկիկների փոքրիկ թաթիկներով ե, վոր զյուղը պիտի լցվի «նորություններով»: Այդ պատճի խլուրդներն աննշան և աննկատելի կերպով պիտի հիմքից կրծեն հին զյուղի խարխլած շենքը»:

Ընկ կենինը առանձնապես խոշոր նշանակություն եր տալիս զյուղում պիոներների մեջ տարբելիք աշխատանքին: Դեռ 1920 թ. իլյիչը կոմյերիտամիությանը սովորեցրել է, թե «հարկավոր է, վոր կոմյերիտամիությունը բոլորին՝ մանուկ հասակից, սկսած 12 տարեկանից»: Կրթի զիտակցական ու կարգապես աշխատանքի մեջ»:

Ընկ. Կլարա Ցետկինը պատմում է, թե ինչպես մի անգամ վաղիմիմիր իլյիչը զյուղական մանկիկներից ստանում է մի նո-

մակ: Յերեխաներն Իլյշին զբուժ ելին այն մասին, վոր իրենք այժմ ամեն որ լվացվում են: Իլյիչը այդ նամակից շատ գոհ մնաց: Առաջին խոկ հայացքից, կարծես թե շատ հասարակ զործ է: Մանկիչներն ամեն որ լվացվում են և ուրիշ վոշինչ: Ահա բոլորը: Բայց Իլյիչը զբանում տեսավ բոլորովին ուրիշ բան: Իլյիչի համար դա խոշոր զործ է, հսկայական հաջողություն: Նա գիտեր, վոր գյուղական այն յերեխաները, վորոնք ամբողջ շարաթը սովոր են կեզառու ման զալ և լվացվել միմիայն տոն որերին, այսոր իրենք են վորոշել ամեն որ լվացվել: այդ գեպրում նրանք գեռ շատ ու շատ հեռու կդնան: Նրանք կսովորեն զրագիտություն, կսովորեն աշխատել նոր ձեռվ և զեռ ծսողներին ել իրենց յետեղ քաշ կտան:

«Դեմ, կասեն մեզ, փարբը մեծին չի սովորեցնի», խոկ յերր վոր զիտում ես, զործնականում ուրիշ բան և զուրս զալիս: Ռուսաստանում յեղել և գեպք, յերր պիտուրին իր մորը սովորեցրել և զրագիտություն և ուղարկել մորը լիկկայան, չնայած նրա ծեր հասակին: Կան և գեպքեր, յերր պիտուրի սովորությամբ մայրը զրագիտություն և սովորել:

Պիտուրական կոլեկտիվները գեղջկունի մայրերին ցույց են տալիս խոշոր սպառություն:

Պիտուրները հավաքում են գյուղական մանկիկներին, խոսակցում նրանց հետ, սովորեցնում զրագիտություն, կարգում են նրանց համար զրբույլներ և պատմում նրանց այն բոլորի մասին, վոր լսել են իրենց զեկավարներից:

Պիտուրները գեղջկունում սպառում են կազմակերպիկ մասուներ ու զրագեցնում են չոկտեմբերիկներին: Միքանի տեղերում պիտուրները կազմակերպիկ են մանկական հրաշարակներ, առանց մեծերի սովորության, ուր համախմբել են գյուղական մանկիկներին և կազմակերպիկ զանազան խաղեր:

Պիտուրները պիտօք և աշխատեն փոքրիկ հովիվների մեջ, հրավիրեն նրանց պիտուրական ակումբը, պարագմունքների և այլն:

Հաճախ գյուղական յերեխաները խուլիցանությամբ՝ ջարդ ու փշուր են անում ցանկապատերը, փշացնում բանջարանոցները այգիները և զողանում բանջարեղենն ու մրգերը:

Պիտուրները սովորեցնում են յերեխաներին հետ կանգնել նման խուլիցանություններից և վատ սովորություններից: Մի համարքիր զեպք: Տասնետեկ տարեկան մի աղջիկ, վոր զողությամբ եր պարագում, ցանկություն և հայտնում մանելու պիտուրական

կոլեկտիվը: Պիտուրները սկզբում հրաժարվում են նրան ընդունել, բայց հետո, կրկին քննության առնելով նրա հարցը, ընդունում են այդ աղջկան իրենց շարքերում և սովորեցնում զուզություն չանել:

Այս բոլորը ցույց են տալիս, թե վորպիտի ոգնություն են ցուցադրում պիտուրական կոլեկտիվները զյուզում և վորպիտի նեցուկ են հանդիսանում գեղջկունի մայրերի համար:

## ԻՆՉՊԵՍ ԵՆ ԿԱՐՈՒՅՎԱՆ ՊԻՌՆԵՐԱԿԱՆ ԿՈԼԼԵԿՏԻՎՆԵՐԸ.

Պիտուրական կոլեկտիվներն իրենց կազմակերպությամբ և կառուցվածքով նման չեն կուսակցության և կոմյերիտմիության ըջիջներին: Սրանք բոլորովին այլ կերպ են կառուցված: Կազմակերպության այն ձեւը, վորը կարող և պիտօքական լինել մեծերի համար, նա չի կարող համապատասխանել փոքրերին:

Վորպիտի հետ լինի աշխատել ու զեկավարել պիտուրներին և վորպիտի կազմակերպության զեկավարներն ու պիտուրները ավելի մոտեկից կարողանան ճանաչել իրարու, 30—40 հոգուց բաղկացած պիտուրական կոլեկտիվը բաժանվում և խմբակների, մտցնելով յուրաքանչյուր խմբակում 10 հոգու, այսպիսի խմբակը անվանվում և «ողակ»: Յուրաքանչյուր կոլեկտիվի և խմբակ ունեն իրենց անուները: Այսպիս որինակ, կան կոլեկտիվներ և ողակներ, վորոնք անվանվում են հեղափոխության զեկավարների անուններով: Կան և այնպիսիները, վորոնք կրում են հեղափոխական զեպքերի անունները:

Կոլեկտիվների զեկավարները կոչվում են «կոլվարներ»: Պիտուրական կոլեկտիվները կազմակերպվում են կոմյերիտմիության կողմից և աշխատում են նրա անմիջական զեկավարությամբ: Ընդհանրապես կոլեկտիվի և ողակների զեկավարները լինում են կոմյերիտականներ՝ այն ըջիջից, վորին կից կազմակերպված և պիտուրական կոլեկտիվը: Կոլեկտիվի զեկավարները միասին կազմում են կոլեկտիվի խորհուրդ, վորը տանում և ամբողջ աշխատանքը:

Կոլեկտիվի զեկավարից շատ բան և կախված: Յեթե զեկավարը ճանաչում է յերեխաներին, կարողանում են նրանց հետ վարփեր, սիրում և իր աշխատանքը, այն զեպքում պիտուրական կոլեկտիվը կամբական: Դրա հետեւանքով ավելանում և պիտուրների թիվը: Այդ զեպքում գյուղական մանուկները սկսում են հետա-

քրքրվել պիոներական աշխատանքով և մեկ ել տեսնում ես դյու-  
ղում ավելանում և պիոներական մի կոլեկտիվ ես:

Յուրաքանչյուր գեղջկուհի-պատգամավոր պետք է հետե-  
փի, թե ինչ և կատարվում կոլեկտիվում, ինչպես և աշխատում  
ողակավարը: Յեթե պատգամավորնուին նկատում է, վոր զեկա-  
վարը սիալնիր և անում, նա պետք է մատնանշի և ոգնի նրան  
միասին ուղղելու սիալնիրը: Վորպեսզի պատգամավորուհին ավելի  
լավ ծանոթանա թե ինչպես են աշխատում պիոներները և ինչի  
կարիք ունեն նրանք, նա պետք է հաճախի կոլեկտիվի խորհրդի  
ժողովներին, ավելի մոտ կապվի կոմիերիտմիության բջջի հետ,  
վորին կից կազմակերպված է կոլեկտիվը: Պատգամավորուհին  
պետք է իր գյուղի գեղջկուհների ժողովներում հարց դնի պիո-  
ներական կոլեկտիվների աշխատանքի մասին:

Պիոներներն ունեն իրենց հատուկ կանոնները, վորը կոչ-  
վում է պիոներական որենքներ ու սովորություններ: Յուրա-  
քանչյուր պիոներ ընդունվելով կոլեկտիվում՝ խոստանում է կա-  
տարել այդ կանոնները:

Պիոներներն ունեն 5-որենքներ՝

1) Պիոները հավատարիմ և բանվոր դասակարգի գործին  
իլյիշի պատգամներին:

2) Պիոները՝ հանդիսանում է կոմունիստի և կոմիերիտականի  
ոգնականն ու նրա կրտսեր յեղբայրը:

3) Պիոները՝ ամբողջ աշխարհի բանվոր և գյուղացի յերե-  
խաների ու պատանի կոմունարների ընկերն ե:

4) Պիոները կազմակերպում է և ուրիշ յերեխաների ու նրա  
հետ միասին մասնակցում և շրջապատի ամբողջ կյանքին:

Պիոները՝ բոլոր յերեխաների որինակն ե:

5) Պիոները ձգտում է գեպի գիտություն: Գիտությունը և  
հմտությունը՝ ուժ և բանվոր դասակարգի պայքարի գործում:

«Պիոները հավատարիմ է բանվոր դասակարգի գործին՝ իլ-  
յիշի պատգամներին»: Սա պատահի պիոներների առաջին որենքն է:  
Ինչ և նշանակում հավատարիմ լինել իլյիշի պատգամներին: Դա  
նշանակում է աննդիատ պայքարել ամբողջ աշխարհի բանվոր-  
ների և գյուղացիների ազատազրման ու կոմունիստական հասա-  
րակարգի համար: Բայց պիոները վոչ միայն պիտի սովորի պայ-  
քարել, այլ ենա պետք և սովորի կառուցել նոր, լուսավոր կյանք:  
Դրա համար հարթակոր է, վոր պիոները լինի առողջ և ուժեղ:

Նա պետք է սովորի իզուր տեղ չգործածել ժամանակը, ինայել

իր և ուրիշի աշխատանքը: Այս են ասում պիոներներին, պիոնե-  
րական սովորությունները: Այդ սովորությունները, ինչպես և  
որենքները 5 են՝

1) Պիոները պաշտպանում է իր և ուրիշների առողջությունը.  
Նա տոկուն է և կայտառ: Առվոտ վաղ վեր և կենում նա, ինամ-  
բով լվացվում և մարզանք կատարում:

2) Պիոները պահպանում է իր և ուրիշների ունեցվածքը:  
Իր գործը կատարում է արագ և բարեխղճորեն (կանոնավոր):

3) Պիոները աշխատասեր է և հաստատակամ, ամեն տեսակի  
պայմաններում ել նա կարող է կոլեկտիվ կերպով աշխատել,  
և գտնում է բոլոր հանգամանքներից դուրս գալու միջոցը:

4) Պիոները հասարակական ունեցվածքի հանդեպ ինայող է,  
նա կանոնավոր և վերաբերվում դեպի գրքերը, հագուստը և ար-  
հետանոցներին պատկանող իրերը:

5) Պիոները չի հայնում, չի ծխում և չի գործածում վոգե-  
լից խմիչքներ:

Բոլոր պիոներները հագնվում են միատեսակ հագուստ.—  
ըլուզները գորշագույն, կարմիր փողկապով, կարճ շալվարով կամ  
գերյայով: Այս տեսակ հագուստը շառ հարմար և աշխատանքի  
և խաղերի համար ու չի ճնշում մասնուկներին: Յերեխաները պիո-  
ներական նման հագուստը տներից չեն բերում, այլ ստանում են  
պիոներական կազմակերպությունից, վորն իր հերթին ձեռք և  
բերում հասարակական կազմակերպություններից, որինակ. Կո-  
ռուպերատիվից:

Պիոներները ինչպես և կոմիերիտականները ունեն իրենց  
պիոներական նշանը—կարմիր զինարկի վրա կա մուրճ և ման-  
գաղ, մանգաղի ներսից յերեսում և վասվող խարույկ: Բոցը խա-  
րույկից տարածվում է գեպի վեր յերեք լեզվակներով: Խոկ ման-  
գաղի վրա մակագրված է «յեղիր պատրաստ»: «Բանվորական  
գործի համար մղվող պայքարում յեղիր պատրաստ»—պատահի  
պիոներների կանչն է: Յյուրաքանչյուր պիոներ դրան պատա-  
հանում է «միշտ պատրաստ», այսինքն, նա մշտական պատրաստ և  
պայքարել բանվոր դասակարգի հարստահարողների դեմ: Պիոնե-  
րական նշանը հիշեցնում է պիոներին իր պարտականություն-  
ների մասին:

Մեզանից ամեն մեկը տեսել ե, թե ինչպես են պիոներները  
վողջունում իրարու, ձեռք տալու փուարեն, նրանք աջ ձեռքի  
5—մատերը իրար ամուր սեղմած բարձրացնում են գլխից վել:

Այն անձնավորությունը, վորը չգիտե թե ինչ նշանակություն ունի այդ, զարմանում ե՞ «Ինչու համար են պիոներներս այդպես անում»։ Պիոներների համար վողջույնի այլ ձևը ունի առանձին միտք՝ այլ ձևորի հինգ մատերը դա 5 աշխարհամասերն են, վորոնեղ զեռ կա հարստահարություն և վորոնց աղատավրման համար են կովում պիոներները։ Պիոները վլիից վեր և բարձրացնում ձևորը, վորպեսզի ապացուցի, վոր ընդհանուր գործը սեփական գլխիցն ու կյանքիցը բարձր ե և թանգ։

Պիոներները իրենք շատ խիստ կերպով հետեւում են իրենց որենքների ու սպորությունների կատարմանը և իրենց վարքին։ Այն մայրելք՝ վորոնց յերեխանները պիոներներ են, շատ քիչ հոգու ունեն տանելու իրենց յերեխանների նկատմամբ։

## ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՇԽԱՏՈՒՄ ՊԻՌՆԵՐՆԵՐԸ.

Բնոհանրապես պիոներական կոլեկտիվը շարաթական միամգամ և համագլուխ կոլեկտիվի հավաքույթները սովորաբար կազմակերպում են կիրակի որերը, յերբ յերեխանները և նրանց զեկավարները ազատ են լինում։

Պիոներական ողակը ամբողջ մի շարաթ աշխատում և առանձին։ Իսկ կոլեկտիվի հավաքույթում ողակավարները պատմում են այն մասին, թե մի շարաթվա ընթացքում ինչ են արել մանուկները։ Կոլեկտիվի զեկավարը այդ պատմվածքներից իմանում ե, թե մի շարաթվա մեջ, վորպիսի աշխատանքը և տարված։ Յերեխանների հետ միասին կոլվարը քննում է այդ աշխատանքը, ցուցադրում և սխալները և խորհուրդ և տալիս թե ինչպես ուղղել կատարված սխալները։ Պիոներները բոլորը միասին վորոշում են, թե ինչպես շարունակել աշխատանքը հետագայում։

Զրույցներից և բարձր ընթերցումներից յերեխանները զեկավարներից կիմանան՝ թե ինչ բան և Խորհրդացին իշխանությունը, կոմունիստական կուսակցությունը, կոմյերիտամիությունը և այլն։ Մանուկները կծանոթանան զյուղացիների և բանվորների կյանքի հետ։ Նրանք կիմանան, թե ինչպես ցարի ժամանակ կալվածատերերն ու գործարանատերերը հարստահարում եյին աշխատավորությունը, թե ինչպես կատարվեց հեղափոխությունը, ինչպես վորությանը, թե ինչպես կատարվեց հեղափոխությունը, ինչպես այժմ զյուղացիները ու բանվորները կառուցում են իրենց պետությունը։

Այդպիսի զրույցները՝ պիոներները սիրում են կազմակերպել հատկապես ամառվա գիշերներին խարույկի շուրջը, մի վարեկ անտառում կամ մարգագետնում։ Պիոներական կոլեկտիվին յերեւնին միանում են՝ ուսուցիչը կամ զյուղատնտեսը։ Վերջիններին կողմից կազմակերպված զրույցների միջոցով պիոներները հաջորդաբար կիմանան, թե ինչ բույսեր են աճում իրենց յերկրում, ինչպիսի վայրենի կենդանիներ, թռչուններ կան, վորպիսի սփռու են տալիս մարդուն, ինչպես պիտք և վարեկ անապահությունը, վոր բույսերը վորոեղ ավելի լավ կարող են աճել և այն։ Ուսուցիչը կպատմի պիոներներին թե անցյալում ինչպիսի ժողովուրդներ են գոյություն ունեցել, ինչպես են նրանք ապրել և հիմա ինչպես են ապրում բանվորներն ու զյուղացիները մյուս յերկրներում։

Բայց միայն զրույցներն ու բարձրաձայն կարգալը բավական չեն պիոներների համար։ Հարկավոր և միաժամանակ շարաձակություն ել անել զարգացնալ և վազգել գես ու գետ։

Մեծերի հետ աշխատելուց հետո, պիոներները կազմակերպում են խաղեր, յերգում են, մարզանք են աճում, իսկ վերջը ուրախություն-գվարդություն՝ վորից հետո աշխուժ ու կայտառ ցրվում են իրենց տները։

Յեվ այսպիս պիոներական կոլեկտիվներում յերեխանները աննշմարելի կերպով հետ են պահվում լրությունից, խուլիքանությունից և վատ սովորություններից։

Գյուղական պիոներները սովորում են զյուղատնտեսությունը ճիշտ կերպով վարել։

Գյուղում պիոներական կոլեկտիվներն ունեն իրենց բանջարանցները։ Այդ բանջարանոցներն անվանվում են «փորձնական», վորտեղ յերեխանները մեծացնում են զանազան տեսակի բանջարեղեններ, վորի հետեւանքով իմանում են թե իրենց կողմում վոր տեսակն և ավելի լավ աճում։ Հաճախ պիոներական բանջարանցներում բերքը ավելի լավ և լինում, քան զյուղացիների բանջարանցներում, վորովհետեւ պիոներները աշխատում են զյուղատնտեսական աշխատանքները։ Այնտեղ նրանք սովորում են՝ ճիշտ կերպով ինսմել անտառներին, հաղափորությունն, այգեգործությունն, վնասակար միջանների գեմ կովելը և այն։

Մի քանի տեղերում պիոներները կազմակերպում են զյուղատնտեսական կոմմուններ։

Պիոներները սովորում են ամեն ինչը անել իսպանց ուժերով: Մաքրում են իրենց բնակարանը, հատակները, փայտ կարում, վառում, հետեւում իրենց և հագուստի մաքրությանը:

Պիոներները կոլեկտիվներում իրենց ընկերներին և գյուղական մնացյալ մանկիներին զրագրություն են սովորեցնում: Դեպքեր են յեղել, յերբ պիոներները ուսուցիչներին ոգնել են գյուղական յերեխաներին գրագիտություն սովորեցնելու գործում:

Պիոներները ինչով կարողանում են ոգնում են ուսուցչին: Դպրոցում ուսման մեջ, պիոներները աշխատում են որինակելի աշակերտներ դառնալ: Պիոներները ոգնում են միմյանց և ոգնում սովորել չքափոր յերեխաներին: Գյուղացության ոգտի համար, պիոներները ուսուցչին ոգնում են զպրոցը կառուցել նոր հիմունքներով: Նրանք գիտեն, վոր զպրոցում ձեռք են բերում զիտելիքներ, վորոնք կողնեն իրենց նոր կյանքի կառուցման գործում:

Դպրոցում ամբողջ աշխատանքը տարվում է ֆորտոսամների միջոցով (պիոներների միավորումներ զպրոցում): Ինչպես իր մոտ կոլեկտիվում, այսպես և դպրոցում պիոները հետեւում է մաքրության, կարգ ու կանոնի, պաշտպանում և զպրոցի իրերը. այդ բոլորը նա պետք է սովորեցնի ուրիշներին: Պիոներները ոգնում են ուսուցիչներին զպրոցի ոգտին կազմակերպել ցուցահանդեսներ, հավաքել կոլլեգիաներ և զպրոցական իրերը կարգի բերելու մեջ: Պիոներները այդ բոլոր զործերում աշխատում են առաջ քաշել նաև մյուս զպրոցականներին:

Պիոներական կոլեկտիվները խրճիթ-ընթերցարաններին խոր ոգնություն են ցուցադրում: Նրանք ոգնում են խրճիթավարին՝ կազմում, կարում, բաշխում են գրքեր և թերթեր, հավաքում են խրճիթ ընթերցարանը, սենյակը տարացնում և բարձրածայն կարգում անդրագետների համար:

Նույնպես և իրենց ընտանիքում, պիոներները աշխատում են անտեսությանը ոգնել, նայում են փոքրիկ յերեխաներին և հետեւում մաքրության:

Պիոներները իրենց ընտանիքի անդամների համար բարձրածայն կարգում են գրքեր, թերթեր, սովորեցնում նրանց գրադարանություն և գեկավարում են լիկվայանն ու խրճիթ ընթերցարանը:

Հիշելով Բլիշի պատգամները, պիոներները ոգնում են աշխատավոր գյուղացությանը: Նրանք առաջին ներթին աշխատում են ոգնել գյուղական չքափորներին, այրիներին և կարմիր բանական յինների կանանց:

Խորհրդային Միության գյուղացիներից մեկը պատմում է՝ թե ինչպես մի անգամ պիոներները տեսնում են, վոր աղքատ գյուղացին չի կարողանում խոտը տուն տանել, սայլակի փշացած լինելու պատճառով: Պիոներները ընդհանուր ժողովում վորոշում են զիմելի իրենց հիմնարկին սայլակի ակներ ստանալու մասին: Հիմնարկը նրանց խնդիրքը կատարում է տալով նրանց 4 ակներ, վոր և պիոներները հանդիսավոր կերպով հանձնում են գյուղացուն:

Յեվ ահա թե ինչպես կարելի յե ոգնել այրի կանանց, վորոնք դրամ չունենալու պատճառով չեն կարողանում կոռպերատիվին անդամագրվել: Պիոներները կարող են կազմակերպել ներկայացնումներ և ծախված տոմսներից ստացված արդյունքը մտցնելով կոռպերատիվը կարող են անդամագրել այրի կանանց:

Նման շատ և շատ որինակներ կարելի յեր բերել: Պիոներները իրենց աշխատանքով կարողանում են գյուղացիության սերը վայելել: Հաճախ այնպես և լինում, վոր այն գյուղացիները, վորոնք սկզբնական շրջանում հավատ չեյին ընծայում դեպի պիոներները, հետագայում նրանք իրենց յերեխաները զրկում են պիոներական կոլլեկտիվները և դա դեռ բավական չե, իրենց հարևաններին և լ են համոզում յերեխաներին պիոներական կոլլեկտիվներն ուղարկելու:

Պիոներները մեծ ոգուած են բերում գյուղացիներին դաշտային աշխատանքների ժամանակ: Նրանք ոգնում են գյուղացիներին հացը հավաքելու, հնձելու, տեղափոխելու մառաններն և այլն: Մի գյուղացի իր նամակում գրում ե՝ «Մեր զաղութում պիոներական կոլլեկտիվ չկա: Դաշտային աշխատանքի ժամանակ քաղաքից մեղ մոտ յեկան պիոներները և սկսեցին ոգնել մեզ: Նրանք մի շաբաթվա ընթացքում հնձեցին 1500-խուրձ հաճար և գարի, չորացրեցին մոտ 2000-փութ խոտ, դիզեցին և տեղափոխեցին փայտատունը: Հավաքեցին 500-փութ գետնախնձոր, սղոցեցին 12-սահեն փայտ և այլն: Բացի զրանից, պիոներները կազմակերպեցին խրճիթ-ընթերցարան և պիոներական կոլլեկտիվ: Մենք չափազանց գոհ մնացինք պիոներների աշխատանքից», — ավելացնում ե իր նամակի վերջում նամակագիր գյուղացին:

## ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵՑԻՆ ՊԻՌՆԵՐԱԿԱՆ ԿՈԼԼԵԿՏԻՎՆԵՐԸ.

Թիոներական կոլլեկտիվները կոմունիստական մանկական կազմակերպություններ են: Բուրժուազիան ունի իր մանկական կազմակերպությունները, փորձնակազմություններ:

Ակառատական 1-ին կազմակերպությունները ծագել են բուրժուական ամենահարուստ և հզոր յերկրներից մեկում—Անդիայում: Մեզանում մինչև հեղափոխությունը նույնպես գոյություն ունեցին սկառական խմբեր:

Ամբողջ յերկրների բուժուազիան շատ լավ գիտե, թե վորպիսի նշանակություն ունի գասաթարակությունը յերիտասարդության համար: Բուրժուազիան բոյ-սկառատական խմբերում յերեխաներից պատրաստում ե կազմակազմական հասարակակարգի համար հավատարիմ և անձնվեր ծառաները: Ակառատական խմբերում այդ բանը ավելի հեշտ եր անել վորովհետև մեծ մասամբ սկառատաները աստիճանավորների (չինովութիւնների), վաճառականների կամ զինվորականության յերեխաներն ելին: Յեզ չնայած այն հանգամանքին, փոք սկառատական խմբերում ընդունում ելին բոլորին, այնուամենայնիվ բանվորների յերեխաները չնչին տոկուելին կազմում սկառատաների մեջ:

Բանվորների համար բոյ-սկառատական կազմակերպությունը միանգամայն ոտար եր: Այդ բանը հարավի կերպով հեղափոխության ժամանակ ապացուցեցին մեր յերկրի սկառատական խմբերը: Բաղաքացիական կոխվերի ընթացքում բոլենիների գեմ կովելիս, սկառատաների մեծ մասը ոգուում եր սպիտակ գվարդիականներին: Ակառատաներից շատերը սպիտակ սպաների հետ միասին կողք-կողքի պատերազմում ելին մեր գեմ:

Սակայն վոչ բոլոր սկառատական խմբերը սկսեցին կովել Խորհրդային իշխանության գեմ: Հեղափոխությունից հետո նրանցից մի քանի խմբեր սկսեցին աշխատել կոմյերիտմիության հետ միասին: Բաղաքացիական կոխվերի այդ շրջանում կոմունիստական կուսակցությունը և կոմյերիտմիությունը հարավորություն չունեցին զրագիր պրոլետարական յերեխաների կազմակերպման գործություն կովում ելին թշնամու և սովոր գեմ:

Չնայած բաղաքական մոմենտի ամենածանր պայմաններին, պատասնեական շարժումը անում եր: Պատանեական կազմակերպությունները սկսում են ինքնարերարար ստեղծվել 1920 թվի

սկզբներում: Մի քանի գավառներում, ինչպես Լենինականի և Յերևանի, սկսվում են կազմակերպվել մանկական խմբակներ, միություններ և խորհրդակցություններ: Այդ ժամանակաշրջանում կազմակերպության կողմից հրատարակվում եր «Պատկոմ» թերթը (1921—22 թ.):

Անշուշտ, կոմյերիտմիությունը ուշագրություն դարձրեց այդ շարժման վրա: Բայց բաղաքացիական կոխվը խանգարեց նրան կազմակերպել պրոլետարական պատանեկության: Ակառատական կազմակերպությունները ոգտվելով այդ հանգամանքից, շարունակեցին յերեխաների մեջ աշխատել հին ձեռով: Կոմյերիտականները տեսան, վոր սկառատաները բացի իրանց վասից, ուրիշ վոչ մի ոգուած չեն տալիս պատանեկության: Վորից հետո սկառատական խմբերն ցրվեցին և կոմյերիտականներն իրենք սկսեցին կազմակերպել պրոլետարական պատանեկությանը: Կոմյերիտմիությունը պիոններական առաջին կոլլեկտիվները սկսեց կազմակերպել մանկատաներին և գլուխներին կից, ուր համախմբված ելին մեծ մասամբ աշխատավորության զավակները: Իսկ ոռուսաստանի արդյունաբերական վայրերում պիոններական կոլլեկտիվները կազմակերպվում ելին առաջին հերթին գործարաններին կից, ուր բոլորը բանվորների յերեխաններ ելին:

Պիոններական առաջին կոլլեկտիվները սկսեցին կազմակերպվել Յերեխանում, Լենինականում և գավառական մի քանի այլ քաղաքներում, Լուստողկոմի և կոմյերիտմիության կողմից:

Առաջին քայլը արդեն արված եր: Պիոններական կոլլեկտիվներ սկսեցին կազմակերպվել նախ գավառային կիստրոններում և ապա գավառակներում: Ամենաարագ կերպով աճեց պիոններների թիվը: 1924 թվի Հունվարին Խ-միության մեջ մենք ունեցինք 200.000 պիոններներ, իսկ մի տարի հետո, 25 թվին, նրանց թիվը 7 անգամ ավելացավ: Այդ հանգամանքը բացատրվում է նրանով, փոք 1924 թվին կոմյերիտմիությունը սկսեց լայնորեն կազմակերպվել գյուղական պատանեկությանը պիոններական կոլլեկտիվներում: Մինչ այդ, պիոններական կոլլեկտիվները շատ քիչ ելին: Մեզանում այժմ ել գյուղը շատ հետ և մնում քաղաքից: Այն ժամանակի, յերբ բաղաքառում ամեն մի հարցուր յերեխայից—15-ն յեն պիոններներ, գյուղում յուրաքանչյուր 100 մարդուն (յերեխաններին) ընկնում է 2 հոգի:

Գեղջկուհի-պատակամավորը պետք ե ոգուության զա կոմյերիտմիության՝ գյուղական մանուկներին պիոններական կոլլեկտիվներում գրավելու աշխատանքին:

Յուրաքանչյուր մանուկ կարող ե պիոներ լինել յեթե  
11-16 տարեկան ե: Պիոներական կոլեկտիվներում ընդունվում են  
աշխատավորության և առաջին հերթին բանվորա-գյուղացիական  
յերեխաներ:

Գյուղում առանձին ուշադրություն պիտի դարձնել բատրակ-  
ներին և չքավոր յերեխաներին գրավել պիոներական կոլեկտիվ-  
ներում:

Պիոներական կոլեկտիվներին կից գոյություն ունեն Հոկտեմ-  
բերիկների խմբեր, ուր ընդունվում են 8—11 տարեկան հասակ  
ունեցող մանկիկներ:

Հիմա ամբողջ միության մեջ հաշվվում է մոտավորապես 2 մի-  
լիոն պիոներներ և չորս հարյուր հազար Հոկտեմբերիկներ: Հայ-  
աստանում կան «31,352» պիոներներ և «6,983» Հոկտեմբերիկներ:

## ՄԱՆԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՆՈՐ ԿԵՆՑԱՆ Ե ՄՏՑՆՈՒՄ ԸՆՏԱՆԻԲԻ ՄԵԶ.

Պատանեկական շարժումը վոչնչացնում է արդիոք ընտանիքը:  
Այս, պլոներները բանդում են նաև պետական, սրբացած թիւնիքի:

Բավական է մատնանշել մի քանի փաստեր, վորոնք կապա-  
ցուցեն, թե ինչպես ե ազգում պիոներական շարժումը ընտա-  
նիքի վրա:

Կարսղ ե արդիոք պիոների հայրը ծեծել իր կնոջը—մեր  
պիոների մորը:

Դժվար թե: Զնայած ծնողական զգացմունքը ուժեղ ե, բայց  
և այնպես պիոներ տղան ձեռք կառնի բոլոր միջոցները պաշտպան-  
հանդիսանալու իր մորը, հայտնելով ծեծի մասին համապատաս-  
խան որդաններին:

Մենք գիտենք գեպքեր, յերբ պատի լրագրներում և դպրո-  
ցական թերթերում, մանուկ-պիոներները ծաղրում են ընտանեկան  
ու նահապետական սովորությունները—ուխտագնացությունը,  
հարբեցող հորն ու յեղբորը:

Այդ փոքրիկ փաստերը չափազանց բնորոշ են, նրանք պարզ  
կերպով ցույց են տալիս, թե մանկական շարժումը, վորպիսի թարմ  
հուսանք է մտցնում ընտանիքում:

Գեղջկուհին իր յերեխաների միջոցով կարող ե կառու-  
ցել իր կենցաղը:

Մանուկ—պիոներները կողնեն գեղջկուհուն ազատագրվել  
ընտանեկան պարտականություններից, կհեշտացնեն նրա ամեն-  
որյա կյանքը:

Պիոներների սովորույթն ե—սովորեցնել պիոներներին, վոր-  
պիսզի նրանք պարտաճանաչ լինեն իրենց, և իրենց շրջապատի  
նկատմամբ:

Լվանալ վիզը, ականջները, մաքրել ատամները, ձիշտ կեր-  
պով կերպարվել և մաքուր պահել իր բնակարանը—դա արդեն  
վոչ պակաս քույլ և գեպի առաջ: Յեվ նույն իսկ այնպիսի մի հար-  
ցում, ինչպիսին ե անհատի առողջապահությունը և առողջության  
պաշտպանումը՝ իրոք, վոր պիոները կարող ե ազդել յուր ընտա-  
նիքի վրա:

## ԻՆՉՊԵՍ ՊԵՏԾ Ե ՎԵՐԱԲԵՐՎԻ ԳԵՂՁԿՈՒՀԻՆ ԴԵՊԻ

## ՊԻՌՆԵՐՆԵՐԸ.

Յուրաքանչյուր գեղջկուհի, առավել ևս գեղջկուհի-պատ-  
գամավոր պետք ե իմանա, թե պիոներական կոլեկտիվները  
ինչպես են կառուցված և ինչով են զբաղվում պիոներները: Միայն  
այդ պետքում գեղջկուհին կհասկանա պիոներական կոլեկտիվների  
կարևորությունն ու նշանակությունը զյուղում:

Զե վոր պիոներները—դրանք կոյցերիամիության լավա-  
գույն ոգնականներն են: Մեր յերիտասարդությունը համերաշխ  
աշխատելով կողնի մեջ իսկ յերեխաները կկառուցեն նոր կյանք:  
Դյուզում այդ նոր կյանքի կառուցումը այնքան ել հեշտ չե:  
Գյուղը վարժվել և պապենական սովորությամբ ապրել. նա գժ-  
վարությամբ և հասկանում նոր մտքեր, գժվար և վարժվում նոր  
կյանքին և նոր կենցաղին: Յուրաքանչյուր՝ քայլափոխում հինը  
կովում և նորի հետ: Դարերի որենքները, սովորությունները գեռ  
ևս ամուր են պահում իրենց թաթերում զյուղացուն: Այդ սովո-  
րություններն ու ալանդությունները խանգարում են զյուղացուն  
ապրելու: Նոր զյուղ կառուցելու համար անհրաժեշտ է խորտա-  
կել զյուղական հետամնացությունն ու խավարը: Յեվ լավ ե, վոր  
հենց այդ աշխատանքում ել պիոներներն ոգնում են մեզ: Գյու-  
զում պիոներներն աշխատում են գանդաղ ու աննկատելի. բայց  
նրանց աշխատանքը չափազանց կարենը ե:

Գեղջկուհի—պատգամավորը պետք և ոգնի կոմյերիտմի-  
ությանը, վորպեսզի զյուղական յերեխաները մտնեն պիոներա-  
կան կոլեկտիվների մեջ:

Մեզ մոտ զյուղերում շատ և պատահում, վոր յերեխաները  
վախենում են իրենց ծնողներից՝ գրվելու պիոներական կոլեկ-  
տիվներում։ Յերեխաները իրենց դառն փորձից գիտեն, վոր պիո-  
ներական կոլեկտիվում գրվելու գեպքում, տանը նրանց կշտամ-  
բելու, հայնոյելու և մի լավ ել դմբզելու յեն։ Այդ պատճառով եւ,  
մասուկներն իրենց ծնողներից դադանի յեն մասնակցում պիոնե-  
րական կոլեկտիվում։ Այդպիսի վերաբերմունք պիոներներին—  
իհարկե անթույլատրելի յե։

Պատգամավորուհին պետք և խոսի այդ յերեխաների ծնող-  
ների հետ, պատմի նրանց՝ թե ինչպես են աշխատում պիոներա-  
կան կոլեկտիվները և վորպիսի ոգնություն են ցույց տալիս  
զյուղական անտեսությանը։ Պատգամավորուհին զյուղացիներին  
և գեղջկուհներին պետք և բացատրի, վոր աշխատելով պիոնե-  
րական կոլեկտիվներում, նրանց յերեխաները կլինեն առողջ, ամ-  
րակուռ և կսովորեն զյուղացության համար շատ ու շատ ոգտա-  
վետ բաներ։

Առաջին հերթին պատգամավորուհին պետք և ուղարկի իր  
յերեխաներին պիոներական կոլեկտիվները և այսպիսով որինակ  
ծառայի մյուս մայրերին։

Պատգամավորուհին պետք և ոգնի պիոներների համար շեն-  
քեր վորոնելու, ձեռք բերելու անհրաժեշտ քարակությամբ գրքեր,  
տետրակներ և այլն։


Ըստհանրապես, մեր զյուղական պիոներական կոլեկտիվներն  
աշխատում են առանց վորեկ կոպեկի։ Այստեղ նույնպես պատ-  
գամավորուհին պետք և ոգնի պիոներներին։ Պատգամավորուհին  
կարող և ոգտակար լինել պիոներներին հագուստներ կարելու  
գործում։ Հարկավոր ե և պիոներներին կարել սովորեցնել։ Պատ-  
գամավորուհու կարևորագույն ինդիրն և—ոգնել պիոներական  
կոլեկտիվների աշխատանքին։ Կոմյերիտիության հետ միասին  
ձեռք ձեռքի տված՝ պատգամավորուհուն կաջողվի բարձրացնել  
պիոներական կոլեկտիվներում տարվելիք աշխատանքը և դնել  
այն իր կոչման բարձրության վրա։ Գյուղում յուրաքանչյուր  
պատգամավորուհի պետք և լինի պիոներների ամենամոտ բարե-  
կամը, ոգնականն ու պաշտպանը։

ԱՐԴՅՈՒՆ



### ԱՐԴՅՈՒՆ

Հայաստանի ազգային - պետական մատուցութեան  
և մշակութայի համար  
Ա. Ա. Հայք Ազգային Գրադարան - Երևանի համար



ԳԻՆԸ 20 Կ.



### “Զ Ա Կ Կ Ն Ի Գ Ա”

---

Հրատարակության պահեստը—Թիֆլիս Թուստավելու  
պրլուս № 24

Բաժանմունք—Յեւելան Արովյան փող. № 17